

Կոմպոզիտոր Ա. Խաչատրյան ծնած է 6 հունիս 1904, Քբիլիսի մեջ: Իր երաժշտական կրթությունը ստացած է Մոսկվայի մեջ ականավոր երաժշտագետ հանդուցյալ պրոֆ. Միսակովսկիի մոտ, կոնսերվատորիայի դասընթացը գերազանցորեն ավարտելով 1934-ին, որպես լատերիատ: Այսպիսով իր

ամուսնը արձանագրված է կոնսերվատորիայի մարմարե տախտակին վրա ոսկյա տառերով: Ընկ. Արամ Խաչատրյան մոտեն հետո: քրթբովեցավ բուզարահայության կյանքով և հրաժեշտի պահուն հանձնարարեց իր ջեւմ ողջույնները հաղորդել անոր, «Երևան» թեոթին միջոցով:

(«ԵՐԵՎԱՆ», Սոփիա)

**ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀԸ
ԼԱՆՋԱԽԱԶ Է ՏԱԼԻՍ ՀԱԲԵՇ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ**

Վերջերս, Հաբեշ Կայսեր բարձր կարգադրութեամբ, Երուսաղեմի Հաբեշ տեսչութիւնը ունեցավ իր եպիսկոպոս տեսուչը հանձին գերաշնորհ տեր Ֆիլիփիոս սրբազան եպիսկոպոսի:

Սուրբ Աթոռույս գերաշնորհ տեղապահ սրբազանը օգտվելով առիթից և մանավանդ նկատի ունենալով այն լայն բարյացակամութեամբ, որ Հաբեշ Վեհափառ Կայսրը ցույց կուտա իր երկրի հայազգի հպատակներուն, զեղեցիկ դադափարը ունեցավ Ս. Զատիկի առթիվ պարգևատրել հաբեշոց գերաշնորհ տեսուչ սրբազանը պանակեով մը, իսկ այս օրերս Երուսաղեմ գտնվող Հաբեշ Կայսեր պատվիրակ հոգեշնորհ վարդապետը վարդապետական լանջախաչով մը:

Սույն նվերները 22 ապրիլին հանձնվեցան իրենց գերաշնորհ տեղապահ սրբազան հոր կողմե երբ անոնք Ս. Զատիկի շնորհավորութեան համար եկած էին Պատրիարքարան:

Գերաշնորհ տեր Ֆիլիփիոս եպիսկոպոսը և հոգեշնորհ կայսերական պատվիրակ հայրը այս անակնկալ նվերներէն կարի զղածված, հուզումով և սրտառուչ խոսքերով արտահայտեցին իրենց սերն ու հարգանքը հայ ժողովուրդին և մասնավորապես Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանին նկատմամբ և խոստացան Վեհափառ Կայսեր մասնավոր ուշադրութեան հանձնել այսօրվան այս գեպքը մասնավորապես և ընդհանրապես մեր Պատրիարքութեան բարյացակամ զիրքը իրենց նկատմամբ, որպես ճամնեն անկեղծ բարեկամներ, հայրեր և հովանավորողներ Երուսաղեմի հաբեշ համայնքին:

(«Հայաստանայց Եկեղեցի», օգոստոս, 1952 թ.)

